ուէր, ըստ այս հրահանգին, «Ճրագպուցին Յունվարի հինգ ժողովին ի սուրբ հովուանոցն ի տասներորդ ժամն, եւ այս կանոն կա. Սղ. Տեր հովուեցի զիս, դարձեալ Սղ. ո՛ հովուէսդ Իսրայելի նայ. Սաղ. ըստ Ղուկասու. եւ հովիւ...» «... Յետ այսորիկ եղանեն ի հովուանոցին ի սուրբ Բեթղեհեմ, եւ ժողովին ի ներքս ի յայրն ի մատրանս եւ այս կանոն կատարի. Սղ. կգ. Տեր ասաց ցիս, Սաղ. Մատթ. եւ Յիսուսի Քրիստոսի ծնունդն եր այսպիս»։ Մեր մատենագիրներէն Անանիա Շիրակացի (Է. դար), Մովսէս Կաղանկատուացի (Է. դար) և Գրիգոր Տաթեւացի կը յիշատակեն Հովուանոցի եկեղեցին։

Հայերը, Յոյներն ու Լատինները հին տեսները Ծննդեան գիշերին թափօրով Հովուանոցի եկեղեցին կ'երթային «փառք ի բարձունս» երգելու և պատարագելու համար։ Այս պարագան կը հաստատուի, ինչպէս վերև յիշեցինք, հին տօնակարգերով։ Բայց աւելի վերջին դարերուն՝ մինչև 1813 թուականը, երբ Հայ Միաբանութիւնը և ուխտաւորները Ս. Ծննդեան տօնին հանդիսաւորութեամբ Բեթղեհէմ կ'երթային՝ սովորութիւն էր Ս. Աստուածածնի քառասնեայ պահած մաղարան ուխտի երթալէ վերջ, դուրսի կողմը անոր առջև կեցած՝ հովուաց տեղոյն դիմացը, «խորհուրդ մեծ» շարականէն յետոյ Աւետարան կը կարդային եւ «փառք ի բարձունս» կ'երգէին, ապա կը դառնային Ս. Ծննդեան եկեղեցին (Ձեռ. Թ. 893, էջ 245)։ (Սոյն եկեղեցիին պատմութիւնն ու նկարագրութիւնը տեսնել Հ. Վ. Ե. էջ 58-65)։

Հիմակ յիշենք նաև Քրիստոսի Ծննդեան առթիւ ուրիշ աւանդութիւններ.

ա) Քրիստոսի առաջին ղուացման ջուրը այրին մէջ.— Արգուլֆ եպիսկոպոս իր ուխտաւորութեան առթիւ կը